



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



ՅԻԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ

22 ՆՈՅԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Ախոր եւ Վերադարձ	էջ 3
Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(36.1-9)

Եզեկիայի թագաւորութեան տասնընչորրորդ տարին, Ասորեստանի Սենեքերիմ արքան յարձակեցաւ Հրէաստանի բերդաքաղաքներուն վրայ եւ զանոնք գրաւեց: Լաքիշ քաղաքէն, Սենեքերիմ մեծ զօրքով մը իր հրամանատարը ղրկեց Երուսաղէմ, Եզեկիա թագաւորին հետ բանակցելու: Հրամանատարը եկաւ կանգ առաւ թափիչին արտը տանող ճամբուն վրայ գտնուող ջրանցքին վերին աւազանին քով: Եզեկիայի կողմէ անոր քով եկան Քեղկիայի որդի Եղիակիմը, որ արքունի հազարապետն էր, հրովարտակներու քարտուղար Սոմնասը եւ Ասափի որդի Յովաքը, որ արձանագրութիւն պահող քարտուղարն էր: Հրամանատարը ըսաւ անոնց.

– «Գացէ՛ք, ըսէ՛ք Եզեկիային.– Այսպէս կ'ըսէ Ասորեստանի մեծ թագաւորը. “Ի՞նչ բանի ապաւիններ ես: Երեւակայութեամբ ու խօսքով պատերազմ կը մղուի՞: Որո՞ւ ապաւիններ ես հիմա, որ ինծի չես ենթարկուիր: Եթէ յոյսդ դրեր ես Եգիպտոսին, այդ եղեգէ մականին վրայ. անիկա ջախջախուած է արդէն. անոր կռթնողը կ'իյնայ եւ անով իր ձեռքն ալ կը վիրաւորէ”: Այո՛, ջախջախուած եղէք մըն է Եգիպտոսի թագաւորը, փարաւոնը, եւ այդպէս ալ պիտի ջախջախուին բոլոր անոր ապաւինողները: Իսկ եթէ ըսէք. “Մեր Տէր Աստուծոյն ապաւինած ենք”, ատիկա նոյնինքն այն աստուածը չէ՞, որուն բարձրադիր սրբատեղիներն ու

զոհասեղանները քանդել տուաւ Եզեկիա, եւ Հրէաստանի բնակիչներուն պատուիրեց որ միայն Երուսաղէմի մէջ գտնուող անոր սեղանին առջեւ երկրպագութիւն ընեն: Եկէ՛ք ուրեմն, իմ տիրոջ՝ Ասորեստանի թագաւորին միացէ՛ք, եւ ես ձեզի երկու հազար ձի կու տամ, եթէ դուք կրնաք այդքան հեծեալներ տալ: Իսկ եթէ այդքան հեծեալ ալ չունիք, եւ ձեր յոյսը միայն Եգիպտոսի եւ անոր հեծելագունդին վրայ դրած էք, այն ատեն իմ տիրոջս ենթակայ կուսակալներէն նոյնիսկ յետինին չէք կրնար դէմ դնել»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-10)

Մենք՝ Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցիին որ Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի:

Մեր աղօթքներուն մէջ միշտ կը յիշենք ձեզ եւ անդադար ձեզի համար գոհուլթիւն կը մատուցանենք Աստուծոյ: Հօր Աստուծոյ առջեւ միշտ կը յիշենք թէ ի՛նչպէս կեանքի կը վերածէ՛ք ձեր հաւատքը, սէրէն մղուած կը ծառայէք ուրիշներուն, եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յուսալով՝ նեղութիւններու կը համբերէք:

Եղբայրներ, գիտէ՛ք թէ Աստուած ձեզ սիրեց եւ ընտրեց, որովհետեւ մեր քարոզութեամբ Աստուած իր Աւետարանը յայտնեց ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ, այսինքն Սուրբ Հոգիի ներգործութեամբ, եւ կատարեալ վստահութիւն ներշնչեց ձեզի: Դուք լաւ գիտէ՛ք թէ ձեր մէջ ի՛նչպէս ապրեցանք, ձեզի օրինակ ըլլալու համար: Մեզի նմանելով դուք

Տիրոջ նմանած եղաք, քանի որ հակառակ ձեր կրած բոլոր նեղութիւններուն՝ Սուրբ Հոգիին պարգեւած ուրախութեամբ ընդունեցիք մեր քարոզութիւնը, եւ ձեր այդ ընթացքով օրինակ եղաք Մակեդոնիայի եւ Աքայիայի բոլոր հաւատացեալներուն: Արդարեւ դուք ձեր օրինակով Տիրոջ խօսքը հռչակեցիք ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ, այլեւ ամէն տեղ ուր Աստուծոյ վրայ ունեցած ձեր հաւատքին համբաւը տարածուեցաւ: Այնպէս որ այլեւս ո՛չ պէտքը կը զգանք բան մը ակեղցընելու, ո՛չ ալ մենք մեզ ներկայացնելու, որովհետեւ ուր որ երթանք՝ մարդիկ իրենք մեր մասին կը պատմեն թէ ի՛նչպէս ձեզի եկանք եւ դուք կուռքերը ձգելով Աստուծոյ դարձաք՝ կենդանի եւ ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, եւ թէ ի՛նչպէս կը սպասէք որ երկիրքէն վերստին գայ Աստուծոյ Որդին Յիսուսը, որ Աստուած մեռելներէն յարուցանեց, եւ որ մեզ պիտի փրկէ գալիք բարկութենէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(12.13-31)**

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապետ, ըսէ եղբօրս որ մեր հօր ձգած ժառանգէն իմ բաժինս տայ ինծի»: Յիսուս պատասխանեց. «Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք ազահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ է իր ամբարած հարստութենէն»:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ.

«Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. “Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, ակելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ.– Ո՛վ մարդ, քանի որ երկար տարիներու

համար ամբարած հարստութիւն ունիս, հանգի՛ստ ըրէ. կե՛ր, խմէ՛ եւ ուրախացի՛ր”: Բայց Աստուած ըսաւ իրեն. “Անմի՛տ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն. որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ”»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր ապրուստին համար թէ ի՛նչ պիտի ուտէք, եւ ո՛չ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՛նչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը ակելի կարեւոր է քան ուտելիքը, եւ մարմինը ակելի կարեւոր՝ քան հագուստը: Դիտեցէ՛ք ազուաները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձեն, ո՛չ շտեմարաններ ունին եւ ո՛չ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թռչուններէն գերազանց էք: Մտահոգուիլը ոեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞: Եթէ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Դիտեցէ՛ք եւ տեսէ՛ք թէ ի՛նչպէս կ'աճի դաշտի շուշանը: Ո՛չ կը հիւսէ եւ ո՛չ ալ հագուստ կը կարէ: Հաւատացէ՛ք որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս ազուոր կը հագցնէ խոտը որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ ակելի լաւ պիտի չհագցնէ՞, թերահաւատներ: Հետեւաբար, մի՛ մտահոգուիք ո՛չ ձեր ուտելիքով եւ ո՛չ ալ ձեր խմելիքով: Մի՛ մտատանջէք դուք ձեզ, որովհետեւ ասոնք բոլորը հեթանոսներուն յատուկ են: Ձեր Հայրը գիտէ որ այդ բոլորին պէտք ունիք: Այլ, ուզեցէ՛ք որ Աստուծոյ արքայութիւնը գայ, եւ Աստուած այդ բոլորը ակելիով պիտի տայ ձեզի»:

Մտահոգուիլը ոեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞:

«... ուզեցէ՛ք որ Աստուծոյ արքայութիւնը գայ, եւ Աստուած այդ բոլորը ակելիով պիտի տայ ձեզի»:

ԱՔՍՈՐ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁ

ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

«Ան իմ ֆաղափս պիտի շինե
եւ իմ ափսոսական ժողովուրդս
ես պիտի դարձնե»,
Ես 45.13

Աստուածաշունչին մէջ ի՞նչ կ'ըսուի աքսորի մասին:
Ի՞նչ է աքսորը:

Անշուշտ Նոր Կտակարանին մէջ աքսորի
աստուածաբանութիւն չկայ, որովհետեւ անոր գիրքերը
աքսորի փորձառութեան մէջ չեն գրուած: Թէեւ անոր
գիրքերուն եւ նամակներուն մեծագոյն մասը սփիւռքեան
վայրերու մէջ գրուած է, սակայն երբեք անոնց մէջ
աքսորի հոգեբանութիւնը չէ յածած: Անկասկած
հաւատացեալներուն ի յերկրի պանդխտութեան
գաղափարը ուրիշ բան է, քան աքսորը: Պետրոս առաքեալ
իր Ա. Նամակին մէջ գրած է. «Կ'աղաչեմ, սիրելիներ,
իրբեւ աշխարհի մէջ պանդխտներ եւ օտարականներ՝
հեռու մնացէք մարմնական ցանկութիւններէն» (նոյն,
2.11): Ուրեմն, այս աշխարհը հաւատացեալներուն
պանդխտութեան վայրն է, իսկ հայրենիքն ալ Երկնաւոր
Հօր տէրութիւնը:

Աքսորը երկրաւոր հայրենիքէն հեռացում է. անիկա
զուտ երկրաւոր փորձառութեան մը կը վերաբերի:
Առհասարակ երբ աքսոր կ'ըսուի, կը հասկնանք
անհատներու կամ ժողովուրդներու իրենց հայրենիքէն
բռնի դուրս գրուելը:

Անշուշտ աքսորի տեսակ մըն ալ կայ, որ կարելի է
բարոյական որակել: Ասիկա ընդհանրապէս ինքնաքսոր
կ'ըլլայ: Մարդիկ իրենք զիրենք դուրս կը հանեն
հայրենիքէն, որովհետեւ զայն անհարազատ դարձած,
օտարացած եւ խորթացած կը տեսնեն: Եւ կամ՝ մարդիկ
իրենք զիրենք ընկերութենէն կ'անջատեն եւ կը
հեռացնեն, որովհետեւ զայն անհարազատ, օտար եւ խորթ
կը տեսնեն:

Աստուածաշունչին մէջ աքսորի փորձառութիւնը
արձանագրուած է՝ յետ Յուդայի թագաւորութեան
անկումին եւ եբրայեցի ժողովուրդի ազնուական ու
հոգեւոր դասերուն եւ ժողովուրդին դէպի Բաբելոն
տարագրութեան:

Այդ աքսորին մասին մարգարէութիւններ կատարուած
էին: Օրինակ Երեմիա գրած էր. «Նայեցայ եւ ահա
պողաբեր երկիրը անապատ եղած էր ու բոլոր քաղաքները
Տիրոջ երեսէն, անոր սաստիկ բարկութենէն փլած էին»
(Եր 4.26): Ինչո՞ւ Տէրը «բարկացած էր»: Որովհետեւ իր
քաղաքին՝ Երուսաղէմի իսկ մէջ չէր մնացած իրաւունք
ընող եւ ճշմարտութիւնը փնտռող մէկ հոգի (նոյն, 5.1):

Աքսորի սաղմոս մըն է 137-րդը: Ահաւասիկ՝
Ամէն անգամ որ կը նստէինք Բաբելոնի գետափին,
կու լայինք՝ Միտը մտաբերելով,
մեր քնարները կախած հոն՝ գետափի ուռիներուն:
Մեզ գերութեան տանողները մեզմէ երբ կը
պահանջէին,

մեզ խոշտանգողները կը ստիպէին որ ուրախացնենք

զիրենք:

«Միտնի երգերէն երգեցէք մեզի», - կ'ըսէին անոնք:

Օտար հողի վրայ՝ ի՞նչպէս կրնանք Տիրոջ նուիրուած
երգ երգել:

Եթէ քեզ մոռնամ, ո՞վ Երուսաղէմ, թող աջ ձեռքս
կտրուի՛,

լեզուս չորնա՛յ եթէ քեզ չյիշեմ, Երուսաղէմ,

եթէ քեզ իմ ուրախութեանս գագաթնակէտը
չդարձնեմ:

Յիշէ՛, ո՞վ Տէր, թէ ի՞նչպէս Երովմացիները կ'ըսէին
Երուսաղէմի կործանման ատեն.

«Քանդեցէ՛ք, կործանեցէ՛ք, հիմնայատակ ըրէ՛ք
զայն»:

Ո՞վ Բաբելոն քաղաք, պիտի աւերուի՛ս.

երանի՛ անոր՝ որ քեզի կը հատուցանէ այնպէս՝ ինչպէս
դո՛ւն ըրիր մեզի...

Ի՞նչ կը տեսնուի այս սաղմոսին մէջ.

1.- Ողբ՝ հոգեւոր կեդրոնի կորուստին:

2.- Աքսորի մէջ հոգեւոր երգեր կատարելու
անկարելիութեան ծանր զգացումը, եւ հարցը՝ ինչպէ՞ս
երգելու:

3.- Հոգեւոր կեդրոնը յիշելու երդում:

4.- Այդ յիշողութիւնը գոյութեանական յանձնառութիւն
մըն է:

5.- Ատիկա ամենէն տենչալին է:

6.- Ատիկա բացարձակ նպատակ է:

7.- Թշնամիի կործանման ցանկութիւնը:

Այս եղաւ եբրայական տարագրութեան հոգեւոր
եւ հոգեբանական ethos-ը, մինչեւ մնացորդացի մէկ
զանգուածին վերադարձը Երուսաղէմ, եւ տաճարին
վերաշինութիւնը: Այդ վերադարձի յոյսը վառ պահուեցաւ:
Այդ յոյսին աղբիւրը՝ Աստուծոյ խոստումն էր: Եւ
Աստուծոյ խոստումը կը լսեն «ականջ ունեցող»ները:
Երեմիայի մարգարէութեան մէջ այսպէս գրուած է. «...քու
վէրքդ պիտի դարմանեմ եւ քու վէրքդ պիտի բժշկեմ՝
կ'ըսէ Տէրը, - քանզի քեզ աքսորուած կոչեցին...Տէրը
այսպէս կ'ըսէ. Ահա ես Յակոբի վրանները գերութենէ
պիտի դարձնեմ, անոր բնակարաններուն պիտի ողորմիմ:
Քաղաքը իր աւերակներուն վրայ պիտի շինուի...» (Եր
30.17, 18):

Վերադարձի ամենէն հօր փոխաբերութիւնն է Եղեկիէլի
չորցած ոսկորներուն տեսիլքը (Եղ 37.1-14): Անիկա կը
յայտնէ Տիրոջ խօսքին կենդանացուցիչ զօրութիւնը:

Բաբելական աքսորի փորձառութիւնը գլխաւոր
դասերէն է, որուն վրայ 2000 տարիներու երկարատեւ
աքսոր մը դիմացաւ եւ զօրացաւ:

Հիմա մեզի կու գամ:

Հայ Սփիւռքը երկի՞ր է, արտերկի՞ր է, թէ՞
աքսորավայր:

Աւելորդ է նոյնիսկ ըսել՝ թէ երկիր չէ: Արտերկի՞ր՝
շատ կասկածելի է: Աքսորավայր՝ հաստատօրէն: Եւ հայ
աքսորավայրին ողբերգութիւնը քաղքենիացումն է, որուն
մէջ սրբութիւնները կ'այլալին, ինքնութիւնը կ'այլասերի
եւ վերադարձը մոռացութեան գիրկը կ'անցնի:

Այս աքսորավայրին մէջ Աստուծոյ ձայնը գրեթէ լուած է,
ճշմարիտ է ըսել՝ գրեթէ չի լսուիր, որովհետեւ ականջները
գոցուած են սեփական ձեռքերով:

Ձեռքերը վար առնել

եւ ականջները բաց պահել...

ԲԱՍՏՐԱՃԵԱՆ ՖՈՆՏԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄ
ԵՒ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԱՆՈՒՆ
ՄԱՍՆԱՃԻՐԻ
ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՄ

ՆԵՐԿԱՅՅՈՒՄ
ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵԱԾ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ»
ՈՒՍՈՒՄԱՐՐՈՒԹԵԱՆ
(ՀԵՂԻՆԱԿ՝ ԳԱՌՆԻԿ Բ. Գ.)

ԳԻՐԸ ԿՐ ՆԵՐԿԱՅՅՆԷ՝
ԴՈՎՍ. ԱՅՏԱ ՊՈՒՃԻՔԱՆԵԱՆ

ԽՍՈՒՔ Կ՛ԱՌՆԵՆ
ԱՐՏ. Տ. ԱՐԱԷՆ Ա. ԲԸՂ. ԻԵՄԱՆԵԱՆ
ԵՒ ՊԱՐՈՆԱՅԸ
ՊԵՏՐՈՍ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ
ԵՒ ՎՐԵԾ-ԱՐԱԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ

ՀԻՆԳՇԱՔԹԻ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՐՔ 8.00-ԻՆ,
Ս. ՅԱԿՈՒՔ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԲԱՍՏՐԱՃԵԱՆ ԱՐՈՎ:

ՊԱՏՄԱԳԻՐՔԻՆ ՀԱՍՈՅԹ
ՊԻՏԻ ԱՈՒՐՈՒԻ Ս. ՅԱԿՈՒՔ
ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏԻՆ

ՏՕՆ
ՄԵՐ ԱՌԱՋԻՆ
ԼՈՒԿԱԽՐԻԶԵՐՈՒՄՆ՝ Ս. ԹԱԴԵՆՈՒՐ
ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻԱԷՆՈՒՐ

ԿՐ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԿՐ ԲԱՐՈՉԷ
ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ.

ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
(ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՍԻՉ)


ԿՐԹԱԿԻ, 29 ՆՈՅԵՄԲԵՐ 2009
ԺԱՐՔ 11.00

ԼՈՅՍ ՏԵԱՄ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I

DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par
Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝
ՉՐԻ ԱՏԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐ
ԿՐ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՁԱՄ ՆԵՐԿԱՅԱՆԱՂ
ԵԿԵՂԵՅԻՅԱ ԳՐԱՆԵՆԵԱԿ